

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոմիտասի անվան ԵՊԿ-ի

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Թիվ 2 ՆԻՍԻ

28 փետրվար, 2019 թ.

Ներկա էին՝

ԵՊԿ Գիտական խորհրդի 42 անդամ:

Օրակարգ

1. Տեղեկություն փետրվարի 22-ին ՀՀ Ճապոնիայի Արտակարգ և լիազոր դեսպան Ն. Գ. պարոն Ջուն Յամադանի կայացած այցի մասին:
2. ա/ Բակալավրիատի Ուսումնական պլանների մշակման գործընթացի հաշվետվություն:
բ/ Մագիստրատուրայի առարկայական ծրագրերի խնդիրներ:
գ/ «Կարգերի, կանոնակարգերի կառուցվածքային փոփոխությունների հանձնաժողովի» ընթացիկ աշխատանքները:
3. Ստեղծագործական ամբիոնի մասնագիտական դասընթացի Առարկայական ծրագրի ներկայացում:
4. ԵՊԿ-ի հավատարմագրման գործընթաց:
5. Հաստատել ԵՊԿ Կոնցերտմայստերական պատրաստման ամբիոնի դոցենտ Սահենիկ Մաղաքյանի «Հայաստանի կոնցերտմայստերները» գրքին վերաբերող ամբիոնի Որոշումը:
6. ԲՈԿ-ով կոչում ստացած ԵՊԿ 10 դասախոսներին համապատասխան պաշտոնին տեղափոխելու մասին ռեկտորի պաշտոնակատար՝ պրոֆ. Սոնա Հովհաննիսյանի առաջարկը:
7. Այլ հարցեր:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. ՀՀ Ճապոնիայի Արտակարգ և լիազոր դեսպան Ն. Գ. պարոն Ջուն Յամադանի հետ հանդիպում-համերգից հետո քննարկվեցին կրթական և մշակութային համագործակցության զարգացման ուղիները:

ՂԱԶԱՐՅԱՆ ԴԱՎԻԹ /ռեկտորի խորհրդական/ – Համերգին բացակա անդամներին ասեմ, որ պարոն դեսպանը ցնցված էր այն հանգամանքից, որ հակիրճ համերգի ընթացքում հնչեցին ճապոնական կոմպոզիտորների, Արթուր Ավանեսովի ստեղծագործությունները (կատարեցին Արամ Հովհաննիսյանը-ֆլեյտա և հեղինակը – դաշնամուր, Անահիտ Ներսիսյանը – մենանվագ դաշնամուր), սպա՝ «Հովեր» պետական կամերային երգչախումբը Սոնա Հովհաննիսյանի ղեկավարությամբ ցնցեց ոչ միայն ճապոնացիներին, այլ նաև մեզ՝ կատարելով Կոմիտաս, ասելով, որ պետք է մեկ անգամ ևս հանրահռչակենք այս տարվա ՅՈՒՆԵՍԿՕ-ի որոշմամբ նշվող հորելյանը:

2. ա/ Բակալավրիատի Ուսումնական պլանների մշակման գործընթացի հաշվետվություն:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ /Ուսումնական գծով պրոռեկտոր/– Շնորհակալություն եմ հայտնում բոլոր ամբիոնների ղեկավարներին կատարված աշխատանքի համար: Մնացել են կրեդիտների վերանայմանը վերաբերող հիմնական շտկումները: Բակալավրիատի Ուսումնական պլաններն արդեն պատրաստ են: Պետք է խնդրեմ Ալինա Աշոտովնային ներկայացնել ընթացիկ աշխատանքին վերաբերող հարցը:

ՓՄԱԼԵՎԱՆՅԱՆ ԱԼԻՆԱ /Հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնի պրոֆեսոր/ – Խոսքը «Հոգևոր երաժշտություն» առարկայի մասին է, որին հատկացված է մեկ տարի: Բայց առարկան այնքան տարողունակ է, որ հասցնում են առարկայի պայմանները բավարել: Մենք ունենք Պատարագի ուսումնասիրության մեծ պահանջ, իսկ դա լուրջ աշխատանք է, որովհետև մեր խմբավարները հետո ղեկավարում են երգչախմբերում: «Պատարագագիտությունը» կարևոր է մեզանում: Այդ առարկան ուսումնասիրելու համար պետք է գոնե մեկ կիսամյակ ժամանակ, որպեսզի բակալավր խմբավարները, երաժշտագետները, կոմպոզիտորները կարողանան ծանոթանալ տարբեր հեղինակների Պատարագներին, գուցե հնարավոր լինի կես տարի տանել մագիստրատուրա: Խիստ զգացվում է քննարկման կարիքը:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ – Մենք կարող ենք ուսումնական պլանի վերջնական հաստատումը հետաձգել, եթե հիմնավորում լինի այդ առարկան Բակալավրիատում սովորելու համար:

ՄԱՀԱԿՅԱՆ ԼՈՒՄԻՆԵ /Երաժշտության պատմության ամբիոնի ղեկավար/– Մագիստրատուրայի ծրագրերի հետ կապված մեծ բաց ունենք և անհրաժեշտ է Տեսական ամբիոնի հետ հավաքվել, քննարկել:

ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐԶԱՄ /Ժող. նվագարաններ և ժող. երգ. ամբիոնի վարիչ/– Մեկը մյուսի հետ փոխադարձ կախման մեջ են գտնվում. այն ինչ Բակալավրիատում արվում է, Մագիստրատուրայում բաց ենք թողնում: Հասկանանք, որը կարելի է շեշտել, որը՝ ոչ:

ԵՓԵՍՅԱՆ ԼԻԼԻԹ /Կատարողական արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչի պաշտոնակատար / – Հիշեցնեմ, որ Մանկավարժական պրակտիկայի ներմուծման վերաբերյալ կրեդիտների հարց ունենք: Սպասում ենք վերջնական որոշմանը:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ – Հումանիտար գիտությունների ամբիոնի հետ կապված եղավ ղեկավարի՝ տիկին Պողպատյանի առաջարկը: Քննարկեցինք Փիլիսոփայություն առարկայի հիմնական լինելը և 2 ժամ ավելացնել «Խոսքի մշակույթ» առարկային: Արդյունքում եկել էմ այն եզրահանգման, որ այս տարի ոչինչ չենք փոխի, որովհետև կատարվել է ահռելի աշխատանք: Ուսումնական պլանի արդյունավետությունը և նպատակահարմարությունը վերլուծելու համար մեզ պետք է ժամանակ: Այս պահին (ևոր ուսումնական տարում առաջին կուրս ընդունվող ուսանողների համար) գործածվելու են այն հումանիտար առարկաները, որոնք արդեն քննարկված, հաստատված են: Մեկ կամ երկու տարի այն կիրառելուց հետո մենք հնարավորություն կունենանք ևս մեկ անգամ վերլուծել արդյունավետությունը: Առավել ևս կարևոր է այն փաստը, որ հիմա նախարարությունը նաև քննարկում է մի նախագիծ, որտեղ Հումանիտար առարկաները ամբողջությամբ կամ մեծամասնությամբ հանելու են ԲՈՒՀ-երից: Եթե մենք մի բան հիմա ավելացնենք, դա կլինի հետ քայլ: Եթե այլանով մենք ինչ-որ տեղ առավելություն ունենք:

ՆԱՎՈՅԱՆ ՄՇԵՐ /Երաժշտության պատմության ամբիոնի դոկտոր/ – Կոնսերվատորիայի որոշ բաժինների, օրինակ՝ երաժշտագետների համար Փիլիսոփայությունը իրենց մասնագիտության իդեալն է. երաժշտագիտական գիտաճյուղը՝ փիլիսոփայական գիտաճյուղ է, հետևաբար պետք է դիտել հիմնական առարկա: Ինչ վերաբերում է «Խոսքի մշակույթ»-ին (ենթադրում ենք, որ դա Հայոց լեզուն է այդպես դարձել), լավ է և ԲՈՒՀ-ին վայել է՝ անցնել խոսքի մշակույթը: Սակայն ցավն այն է, որ ուսանողը ԲՈՒՀ է հայտնվել և խոսել չի կարող: Եվ առարկայի անունը փոխելով մենք չենք լուծում տարրական հարցը: Ուսանողն ավարտում է, ստանում է Բարձրագույն կրթության դիպլոմ, բայց նա հայերեն գրում է տառասխալներով: Ուստի երևի թե, հիմնական նպատակը հաղթահարելու համար, պետք է պահել Հայոց լեզու և տանք տարրական գործնական գիտելիքներ (դիմում, զեկուցագիր, ինքնակենսագրություն գրելու ձևեր և այլն):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ – Դա արդեն առարկայական ծրագրի բովանդակության խնդիրն է, որը պետք է քննարկվի:

ԶՈՒՐԱԲՅԱՆ ԺԱՆՆԱ /Երաժշտության պատմության ամբիոնի դոկտոր/ – Մենք հասել ենք այնտեղ, որ ԲՈՒՀ-ը պետք է տարրական ուսուցում վարի: Ավելի ճիշտ չի՞ լինի, որ Հայերենի ընդունելության քննության ժամանակ պահանջվի անհրաժեշտ մակարդակ:

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՆԱԲԻՆԵՒ /Որակի բաժնի վարիչ/- Ձեր ասածին պատասխանում, որ նախարարության կայքում կա Բարձրագույն կրթության և գիտության օրենքի նախագիծ, որտեղ այդպես էլ գրված է՝ եթե Բարձրագույն կրթությունից հանում են հումանիտար բլոկը և իջնում է Ավագ դպրոց, բայց մենք իրավունք ունենք պահանջել Կետրոնացված քննությունների արդյունքը: Մենք չենք պահանջում դա:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ - Ես համաձայն եմ, որ Հայոց լեզու և Խոսքի մշակույթ առարկայի ծրագրի բովանդակությունը ենթակա է որոշակի վերանայման՝ իր արդյունավետությունն ապահովելու համար: Սրանք սահմանափակ ժամանակ ունեցող առարկաներ են՝ ի տարբերություն մասնագիտական առարկաների: Հատկապես, եթե նման իրավիճակ է, պետք է հատուկ ուշադրություն դարձնել այդ ժամանակահատվածը մաքսիմալ օգտագործելու համար՝ լուծելով նման խնդիրները: Այն ուսանողն, ով դպրոցում յուրացրել է առարկան, նա չի ունենա այդ տարրական խնդիրները: Ինչ վերաբերում է փիլիսոփայությանը, այն կարելի է քննարկել: Միգուցե ներառվի մագիստրատուրայում և վերանայել բովանդակությունն ու համապատասխանեցնել կոնսերվատորիայի տրամադրած ուսումնական ժամանակահատվածին: Պետք է պահվի արդյունավետության բալանսը:

Որոշեցին՝ Հետաձգել Բակլավրիատի Ուսումնական պլանի վերջնական հաստատումը, եթե «Պատարագագիտություն» առարկան հիմնավորվի թողնել Բակլավրիատում:

բ/ Մագիստրատուրայի առարկայական ծրագրերի խնդիրներ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ - Մագիստրատուրայում ունենք մեկ-երկու առարկայական ծրագիր: Իմ խնդրանքը, առաջարկը և, եթե թույլ տաք, պահանջն է, որպեսի մինչև մարտի 31-ը ունենանք Մագիստրատուրայի դասավանդվող բոլոր առարկայական ծրագրերը: Ցանկացած ուսանող իրավունք ունի նախօրոք պահանջել Առարկայական ծրագիրը: Նա պետք է կոնկրետ իմանա, թե ամբողջ տարի ինչ է անցնելու: Իմանա՝ ինչպիսին են քննական պահանջները, հատկապես, եթե ունի լեզվի խնդիր, կարողանա պատրաստվել: Նաև նրանից չի կարելի պահանջել, որ նա դասընթացը անցնի ռուսերեն, սա ընդհանուր խնդիր է, որին պետք է ուշադրություն դարձնենք: Կոնսերվատորիա ընդունվելու պայմանագրի մեջ նշած է հայերեն ուսուցում: Միգուցե օտարազգի ուսանողներին պետք է թեստային մի համակարգ տրամադրվի, քանի որ ուսանողը չի կարող հեռու լինել: Պետք է լրջորեն մտածել, բայց առարկայական ծրագրերը մնում են որպես հիմնախնդիր: Նույնիսկ մենք ունենք Բակլավրիատի ծրագրերը որոշակի վերանայելու խնդիր. մաքսիմալ արդյունավետություն ունենալու համար, համապատասխանեցնել նոր ուսումնական ծրագրերով ազատված դասաժամերը:

Որոշեցին՝

Մինչև մարտի 31-ը ունենանք Մազիստրատուրայի դասավանդվող բոլոր առարկայական ծրագրերը:

զ/ «Կարգերի, կանոնակարգերի կառուցվածքային փոփոխությունների հանձնաժողովի» ղեկավարի զեկուցում:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ - Ռեկտորի պաշտոնակատարի և գիտական պրոռեկտորի մասնակցությամբ մենք ունեցանք Կառուցողական հանձնաժողովի նիստ: Ունեցանք կառուցողական փոփոխությունների ձևաչափերի որոշակի առաջարկներ: Հաստիքացուցակից դուրս են եկել՝

Ուսանողական բուֆետը, որն արդեն գործելու է կոնսերվատորիային կից ստորգետնյա տարածքում: Իրավաբանական գործընթացն ավարտված է, մի փոքր ուշանում է գործարկման փուլը: Ունենալու ենք որակյալ սնունդ ապահովող, ցիվիլ վայր՝ ամբողջ կոնսերվատորիայի համար:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՈՆԱ – Տեղեկացնեմ, որ միջնորդություն էր ներկայացվել տարածքի համար տրվող գումարը կոնսերվատորիայի կարիքների համար օգտագործելու համար, որը մերժվել է և անգամ այլ ձևաչափով առաջարկը նույնպես անհույս է լինելու: Լրացնեմ, որ ցանկացած տարածք, որը կոնսերվատորիան կտրամադրի վարձակալության ձևով, նույնպես գնալու է պետական բյուջե: Այդ նպատակով կոնսերվատորիայում չեն լինի վարձակալման տրամադրվող տարածքներ: Դրանք կներգրավեն ԲՈԻՀ-ի ուսումնական պրոցեսի մեջ: Արդեն սկսվել են Նվազախմբային, կմեկնարկեն Փողային ու երգչախմբային դասարանների պարապմունքները, գիտենք, որ Էստրադային-ջազային ամբիոնը միշտ նեղության մեջ է, և այս բոլոր տարածքները կօգտագործվեն մեր ուսումնական բոլոր կարիքների համար:

1. «Երաժշտական զրուցակից» ծրագիրը: Քննարկումներ ենք ունեցել պրոֆեսոր Արմեն Բուդաղյանի հետ և այս պահին հարմարավետ չենք գտնում, որպեսզի այդ ծրագիրը լինի կոնսերվատորիայի ցանկում:

Վերակազմավորումներ.

1. Միջազգային բաժինն այս պահին լուրջ վերակազմավորման գործընթաց է ապրում: Արդեն հանդիպում ենք ունեցել, քննարկել ենք մի շարք հարցեր կապված կադրային փոփոխությունների, ռեֆերենտների կասեցման, վերադասավորումների հետ, որը կնպաստի մաքսիմալ արդյունավետ

գործողությունների: Կլինեն կոնկրետ աշխատողներ, որոնք ունենան հստակ գործառույթներ:

Ասպիրանտուրայի բաժին

Այս բաժինը լուծարվում է և լինելու է Ասպիրանտուրայի գործընթացների պատասխանատու: Դիմորդ չունենալով շատ հաճախ չենք ունենում գործողություն և այդ հաստիքները անարդյունավետ են մնում: Դիմորդ լինելու պարագայում գործընթացները կվերականգնվեն:

ՆԱՎՈՅԱՆ ՄՇԵՐ – Այտեղ կան նաև Բարձրագույն կուրսերի դասընթացներ: Դրանք վերացվում են:

ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ ԱՐԱՄ – Ոչ, դրանք կան:

Հրատարակչությունը վերանվանել «Հրատարակչական բաժին»: Սա նույնպես թույլ կտա որոշակի օպտիմալացում կատարել, ունենալ պատասխանատու և չունենալ հավելյալ հաստիքների կարիք:

Ուսումնական մասի հետ կապված շուտով կունենանք քննարկում, հանդիպում, որպեսզի կարողանանք վերանայել և մաքսիմալ արդյունավետ օգտագործել և այդտեղ կունենանք հավելյալ աշխատողներ, որպեսզի մեկ-երկու աշխատողի վրա ամբողջ ծանրաբեռնվածությունը չլինի և գործառույթները լինեն արդյունավետ, հասանելի:

Ժողովրդական ստեղծագործության կաբինետը վերանվանել «Ժողովրդական ստեղծագործության ուսումնասիրության լաբորատորիա», որովհետև եվրոպական հավատարմագրման համար կարևոր է, որ ունենանք հետազոտական լաբորատորիա:

ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ ՍՈՆԱ – առաջարկում եմ անվանափոխել Կոնցերտմայստերական պատրաստման ամբիոնի անունը:

ՆԱՎՈՅԱՆ ՄՇԵՐ – կարելի է Կոնցերտմայստերական վարպետության ամբիոն:

ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ ԱՐԱՄ – Ուսանողների վարձավճարների վճարման կարգի հետ կապված երկու շատ կարևոր հարց: Նախարարությունը պատրաստել է նախագիծ, որպեսզի ուսանողները երկրորդ կիսամյակում մաս-մաս վճարելու հնարավորություն ունենան: Սակայն քանի դեռ նախագիծը չի դրվել ընդունման, կոնսերվատորիան իրավասու չէ այդ հնարավորությունը տալ ուսանողներին: Ինչպես գիտեք՝ այդ վարձավճարներից անմիջական կապ ունեն դասախոսների աշխատավարձերը: Հետևաբար այդպիսի ռիսկին գնալու հնարավորություն չունենք: Եվ այս պահին վարձավճարներն ունեն հստակ ժամկետ և դրանք պետք է վճարվեն մինչև մարտի 15-ը: Հիմա մի շրջան է, երբ կոնսերվատորիայում ստուգումներ են ընթանում: Միգուցե

նախկինում նման քանակի և ուշադրության ստուգումներ չեն իրականացվել: Մենք կարող ենք իսկապես լուրջ խնդրի առաջ կանգնենք, եթե ընթացքում մի ստուգող մտնի և տեսնի, որ մենք նույնիսկ ներքին կարգով կիրառում ենք:

ՄԵՀՏԱՐՅԱՆ ՇՈՒՇԱՆ /ռեկտորի օգնական/-երե չեմ սխալվում մենք նախարարությունից մի քանի անգամ ստացել ենք գրություններ, որ բացի առաջին կուրսի առաջին կիսամյակից, հաջորդ կիսամյակներում ուսանողներն իրավունք ունեն մասնակցեն: Կլինեն բոլոր ընդառաջումները՝ իրավական դաշտի շրջանակներում:

ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ ԱՐԱՄ - Ամփոփիչ ատեստավորման կարգի հարցով ունենք նախագծի օրինակները: Նախորդ տարվանից կա նախարարության հրաման, որ Ամփոփիչ ատեստավորումը լինելու է մեկ՝ Մասնագիտական քննությամբ: Մնացած քննությունները լինելու են ավարտական քննությունների տեսքով: Դիպլոմում լինելու է մեկ գնահատական և դա Մասնագիտության գնահատականն է:

ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ ՍՈՆԱ – Այստեղ մեր պրոֆեսորներն ունենին շատ լուրջ տարաձայնություններ: Միայն որպես սփոփանք կարելի է ասել, որ մասնագիտականի մաս կազմող քնությունները պետք է անցկացվեն նորմալ, խիստ քննությունների ձևով, բայց վերջնական՝ պետական քնությունը մեկն է, ոչ թե երկուսը, երեքը:

ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ ԱՐԱՄ - Հավելելով ասեմ, որ Կառուցվածքային նախագծում արդեն կատարվել են հետևյալ փոփոխությունները.

1. Միացվել են դաշնամուրային երկու ամբիոնները (ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պրոֆ. Կարինե Օհանյան)
2. Միացվել են դաշնամուրային երկու ամբիոնները (ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պրոֆ. Ալեքսանդր Կոստեմյան)
3. Միացվել երկու վոկալ ամբիոնները (ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պրոֆ. Գայանե Գեղամյան)
4. Միացվել են Հասարակագիտական և լեզուների ամբիոնները:

Առաջարկ եղավ նաև միավորել Կամերային անսամբլի և Կվարտետի բաժինները: Բայց այս պահին այդ գործընթացը դադարեցվել է: Հանդիպում եմ ունեցել եվրոպական մի շարք կոնսերվատորիաների պրոռեկտորների հետ և մեր առանձին Կվարտետային ամբիոնի գոյությունը դիտվել է որպես առավելություն:

Ուզում եմ շնորհակալություն հայտնել Վաղարշակ Պեպանյանին, Գևորգ Ավետիսյանին, ովքեր ահռելի աշխատանք են կատարում Նվագախմբային ու փողային նվագախմբերի գործարկելու համար: Այս նվագախմբերի գործունեությունը իսկապես մշակութային նոր կյանք է մտցնելու կոնսերվատորիայում, քանի որ պլանավորված են ոչ միայն սիմֆոնիկ համերգներ, այլ համագործակցություն

օպերային ստուդիայի հետ, տարբեր բեմադրություններ իրականացնելու համար: Հետագայում կարող ենք դիտարկել նաև ավարտական քննությունների միզուցե լավագույն ուսանողների մեկական մասով ելույթները՝ նվագախմբի հետ: Որպես դիրիժորներ ընտրված են երկու ուսանող և մեկ շրջանավարտ, ովքեր անմիջական կապի մեջ են լինելու իրենց մասնագիտական դասարանի ղեկավարներ՝ Ռուբեն Ասատրյանի, Էդվարդ Թովչյանի և Յուրի Դավթյանի հետ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՈՆԱ - Նախապես հայտարարեմ, որ այս կիսամյակ մենք կաշխատենք այնպես, ինչպես եղել է. ժամը՝ 13:00-ից Փողային նվագախումբը, ժամը 16:30-ից Սիմֆոնիկ նվագախումբը: Բայց հաջորդ կիսամյակից՝ սեպտեմբերից կտեղափոխվեն ժամերի տեղերը և դասացուցակը համապատասխանորեն պետք է փոխվի:

ԱՍՍՏՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ /Վոկալ-տեսական ֆակուլտետի ղեկան/ – Նախկինում, երբ վեցօրյա ռեժիմով էին սովորում, նվագախումբը չորեքշաբթի-շաբաթ էր: Պետք է հաշվի առնել, որ լինի կամ՝ երկուշաբթի-հինգշաբթի, կամ՝ երեքշաբթի-ուրբաթ:

ԳՅՈՒԼԲՈՒԴԱՂՅԱՆ ՍԻՆՈՐԱ /Կոնցերտմայստերական ամբիոնի ղեկավար/- Խնդրում եմ ուշադիր լինել նախարարության հրամանին, որտեղ գրված է, որ պետք է լինի ամփոփիչ ատեստավորման մեկ պետական քննություն: Այսինքն Կոնցերտմայստերությունը որպես պետական քննություն դուրս է գալիս: Հարցը նրանում է, որ կոնսերվատորիան ունի իր առանձնահատկությունը, մենք չենք կարող առաջարկով դիմել: Կոնցերտմայստերությունը դաշնակահարի ամենակարևոր մասնագիտություններից մեկն է:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՈՆԱ – Բայց դա քննությունով ամրապնդված է, որպես մասնագիտական: Բոլոր առարկաններն էլ կարևոր են, հատկապես մասնագիտական՝ լինի մենակատարային, անսամբլ, կվարտետ, նվագախումբ և այլն: Կարևորությունը չպիտի երևա պետական է, թե՛ ոչ պետական: Առարկայի համար պետական քննություն չսահմանելը չի նշանակում պակաս կարևորել:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ – Մասնագիտական և Պետական քննություն բառերը լրիվ տարբեր հասկացություններ են: Որակավորման վրա չի ազդում, որովհետև չի նշվում:

ԱՎԱԳՅԱՆ ԷԴԻՏԱ /կվարտետային ամբիոնի ղեկավար/ – Մի առաջարկ ունեմ. Կվարտետը, Կամերային անսամբլը Մագիստրատուրայում լինեն մասնագիտացում:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՈՆԱ – շատ լավ առաջարկ է՝ Մագիստրատուրայի ուսումնական ծրագրերը վերանայելիս պետք է քննարկել:

ԱՎԱԳՅԱՆ ԷԴԻՏԱ – Արդյոք Կոնսերվատորիան կարող է որևէ դահլիճի հետ, որ մենք կարողանանք իրականացնել մեր համերգները:

ՀՈՎՀԱՆՆՍԻՅԱՆ ՄՈՒՍ – Այդ մեկը՝ ոչ: Կոնսերվատորիայի այս դահլիճը մերն է: Դուք կարող եք ազատ, նախնական պայմանավորվածությամբ մեր դահլիճում ունենալ համերգներ: Նաև հինգշաբթի օրերին Արամ Խաչատրյան տուն-թանգարանը նախապես պլանավորելու դեպքում անվճար տալիս է իր դահլիճը:

ՀՈՎՀԱՆՆՍԻՅԱՆ ՍՈՆՍ – Ուսանողների հետ նախորդ ուրբաթ հերթական հանդիպում էի ունեցել և իրենք էլ այդ հարցը բարձրացրին: Ես անակնկալի եկա և ուրախացա, որ 150 ուսանող ինքնաբուխ կերպով ներգրավված է իրենց ստեղծած Ուսանողական ֆիլհարմոնիա-յի մեջ: Համոզված եմ, որ եթե այս դահլիճը ներգրավված լինի նույնպիսի համերգային կյանքով, կլինի նույնչափ սիրելի ու պահանջված համերգային սրահ: Այս ամենը ուղակի համակարգելու հարց է, որովհետև գիտեք այլևս շատ են լինելու բաց դասերը, վարպետության դասերը, հանդիպումները և օրացույցը խիտ է լինելու: Ուշադիր եղեք հայտագրերի ու հայտարարությունների էկրանին: Հիշեցնեմ, որ միայն կոնսերվատորիայում դասավանդող դասախոսները և ուսանողներն իրավունք ունեն հայտագրերը էկրանին ներկայացնել:

Որոշեցին՝

- ԵՊԿ-ի հաստիքացուցակից դուրս գրել Ուսանողական բուֆետը
- ԵՊԿ-ի հաստիքացուցակից դուրս գրել «Երաժշտական զրուցակից» ծրագիրը կտորդինացնելու և իրականացնելու բաժինը:
- Լուծարել Ասպիրանտուրայի բաժինը, որպես կառուցվածքայի միավոր (ձևակերպումը ճշտել իրավաբանի հետ)
- «Հրատարակչությունը» վերանվանել «Հրատարակչական բաժին»
- «Ժողովրդական ստեղծագործության կարփնետը» վերանվանել «Ժողովրդական ստեղծագործության ուսումնասիրության լաբորատորիա»
- Առաջարկել «Կոնցերտմայստերական պատրաստման ամբիոնը» անվանակոչել «Կոնցերտմայստերական վարպետության ամբիոն»
- Ուսանողների վարձավճարների վերջնաժամկետը նշանակել մարտի 15-ը (համաձայնեցնել Ուսումնական մասի հետ):
- Սահմանել, որ Ամփոփիչ ատեստավորումը (պետական քննությունը) լինի Մասնագիտական քննությամբ: Մյուս քննությունները լինեն ավարտական քննությունների տեսքով:
- Հաստատել Կառուցվածքային փոփոխությունները. (արդեն հրամանագրված են)

Միավորել դաշնամուրային երկու ամբիոնները (ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պրոֆ. Կարինե Օհանյան)

Միավորել դաշնամուրային երկու ամբիոնները (ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պրոֆ. Ալեքսանդր Կոսեմյան)

- Միավորել երկու փոկալ ամբիոնները (ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պրոֆ. Գայանե Գեղամյան)
- Միավորել Հասարակագիտական և լեզուների ամբիոնները
- Մագիստրատուրայի Ուսումնական ծրագրերը վերանայելիս քննարկել Կվարտետը և Կամերային անսամբլը, որպես մասնագիտական:
- ԵՊԿ Համերգային դահլիճը նախնական պայմանավորվածությամբ տրամադրել ուսանողների, դասախոսների համերգային ելույթների համար:

2. Ստեղծագործական ամբիոնի մասնագիտական դասընթացի . Առարկայական ծրագրի ներկայացում:

ԱՎԱՆԵՍՈՎ ԱՐԹՈՒՐ /Ստեղծագործական ամբիոնի ղեկավարի պաշտոնակատար/- Մինչ այժմ չունեինք Մագիստրատուրայի Առարկայական ծրագիր: Տարիներ աշխատելով այս ամբիոնում պահանջում ու խնդրում էի Բակալավրիատի առարկայական ծրագիրը: Այն տրամադրեցին, երբ դարձա ամբիոնի ղեկավարի պաշտոնակատար: Դեկտեմբերին կազմեցի Կոմպոզիցիայի բաժնի Բակալավրիատի, իսկ` Հունվարին` Մագիստրատուրայի առարկայական ծրագիր, որը քննարկել ենք ամբիոնի փետրվարի 7-ի նիստում: Հաշվի ենք առել մեր դասախոսների բոլոր ցանկությունները, որոնք նշված են ներկայացված Արձանագրության մեջ: Արդյունքում այս երկու ծրագրերը դրվում են Գիտական խորհրդի քննարկման:

Մինչ այժմ Կոմպոզիցիայի ծրագիրը կազմված էր ըստ շաբաթական բաշխման, որն ըստ ամբողջ ամբիոնի բոլորովին իմաստ չունի (ինչպես կատարողական ամբիոններում), արդյունքում նշված էր, որ մենք պետք է երրորդ կուրսի ընթացքում 2-3 օպերա բեմադրենք: Նպատակը եղել է ներկայացնել իրական պահանջներ, ուսանողների կողմից ընկալելի դարձնել որպես ընդհանրական առարկա և չխոչընդոտել ստեղծագործությանը: Բակալավրիատում և Մագիստրատուրայում`

- Ի՞նչ պահանջներ ունենք, թե ի՞նչ ակնկալիքներ ենք ունենում,
- Ի՞նչ սպասելիքներ ունենք, որպեսզի գրվի ստեղծագործությունը
- Ինչպիսի՞ քննական ձևաչափ ենք կիրառելու: Մշակվել են գնահատման նոր չափանիշներ, որպեսզի մենք սկսենք ավելի սթափ գնահատել:

Առաջարկել եմ, որ եթե որևէ ուսանողին դրվում է 20, որպես ավարտական գնահատական, նշանակում է, որ մենք պետք է ամբողջ ամբիոնով երաշխավորենք, որ նա մեզ մոտ մնա դասախոսելու, թեկուզ ասիստենտի կարգավիճակում (առավել ևս Մագիստրատուրան ավարտած ուսանողի դեպքում):

Ներկայացնեմ Բակալավրիատի Դասընթացի յուրացման պահանջները.
Ուսանողը

- պետք է գիտենա երաժշտական ստեղծագործության տեխնիկաները, երաժշտական նոտագրության տարբեր համակարգերը, արդի երաժշտության արտահայտչամիջոցները, գեղագիտությունը:
- պետք է կարողանա երաժշտական տարբեր գործիքային և վոկալ ժանրերում ստեղծել ինքնուրույն երկեր , ճշգրիտ նոտային տեսք հաղորդել իր երաժշտական գաղափարներին՝ պահպանելով երաժշտական գրագիտության նորմերը, երևակայել և պատկերացնել երաժշտական հնչողությունը, արդյունավետ փորձեր անցկացնել, վարել իր երաժշտության կատարողների հետ՝ ներկայացնելով իրատեսական պահանջներ և պահպանելով մասնագիտական հարաբերությունների էթիկան (դա լուծում ենք Արփինե Կալինինայի միջոցով, ով ամեն տարի ապահովելու է կոմպոզիտորների ստեղծագործությունների կատարումը), վերլուծել և նկարագրել իր հեղինակած երաժշտական ստեղծագործությունները (գոնե կարողանա գրել անոտացիա իր իսկ ստեղծագործությունների համար):
- պետք է տիրապետի տարբեր երաժշտական կազմերի համար գործիքավորման հմտություններին, երգչական ձայների տարբեր տեսակների հետ գրագետ աշխատելու կարողության և երաժշտական ձևակառուցման ու դրամատուրգիային վերաբերող գիտելիքներին:

Բակալավրիատի նշված պահանջները բավարարելու համար առաջարկվում է նորկայացված ծրագիրը: Պահանջները կարող են կիսամյակներով տեղափոխվել, այսինքն՝ ուսանողը կարող է աշխատանքը սկսել ցանկացած տեղից, հերթականությունը պարտադիր չի: Քննությունը լինում է միայն ամեն տարվա վերջում:

Մագիստրատուրայում փոխվում է քննության կարգը, գնահատման համակարգը: Քանի որ Մագիստրատուրան քիչ թե շատ գիտական օղակ է, այստեղ փոխվում են պահանջները: Դասընթացը յուրացնելու արդյունքում ուսանողը

- պետք է գիտենա արդի երաժշտարվեստի միտումները, պայմանները և պահանջները, գիտավերլուծական աշխատանքի մեթոդները, երաժշտական կոմպոզիցիայի ոլորտում մանկավարժական աշխատանքի մեթոդները
- պետք է կարողանա ազատորեն ստեղծագործել ակադեմիական երաժշտության ժանրերում, ստեղծել իր երաժշտական լեզուն և ոճը, վարժվել ստեղծագործական աշխատանքի իրական պայմաններին,

կատարել երաժշտական ստեղծագործության պատվերներ՝ հարգելով վերջնաժամկետները, գիտական մեթոդների կիրառմամբ գրավոր և բանավոր վերլուծել իր և արդի այլ մեթոդների երաժշտական ստեղծագործությունները նոտային տեքստի հիման վրա, պատկերացում կազմել արդի երաժշտության փիլիսոփայական և գեղագիտական հիմքերի վրա, պատշաճ մակարդակով անցկացնել կոմպոզիցիայի դասեր (առաջարկում ենք Մագիստրատուրայի երկրորդ կուրսում առաջարկում ենք բաց դաս անցկացնել բակալավրիատի ուսանողների հետ՝ դասախոսների ներկայությամբ),

- պետք է տիրապետի արդի երաժշտարվեստի տարբեր արտահայտչամիջոցներին, երաժշտության մասին գրավոր և բանավոր խոսքի մշակույթին, բավարար գիտելիքների և փորձի, երաժշտական կոմպոզիցիայի ասպարեզում ինքնուրույն աշխատանք ծավալելու և արդի երաժշտական աշխարհում հաջողության հասնելու համար:

Ծրագրին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ:

ՆԱՎՈՅԱՆ ՄՇԵՐ – մի քիչ խիստ չե՞ք մոտեցել մագիստրատուրայում ունենալ սեփական լեզու և ոճ պահանջին:

ԱՎԱՆԵՍՈՎ ԱՐԹՈՒՐ – Չգիտեմ՝ ինչպես պատասխանեմ, բայց իդեալական տարբերակով պետք է ունենա:

ՋԱՂԱՅՊԱՆՅԱՆ ԿԱՐԻՆԵ Երաժշտության տեսության ամբիոնի դոկտոր/- Չեզ մոտ կա Սովորեցնել գիտահետազոտական աշխատանք կատարելու հմտություններին: Այդ առարկան ինձ էին տվել, ես արդեն 3 տարի անց եմ կացնում և կարծելով, որ երաժշտագետը այդ հարցում գուցե ավելի լավ կարողանա անել, ես տալիս եմ այդ աշխատանքը: Ստացվում է կրկնություն:

ԱՎԱՆԵՍՈՎ ԱՐԹՈՒՐ – Մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանողների մոտ ղեկավարում եմ Ռեֆերատը: Չեմ ստացել այդ դասընթացի չափանիշները. Չգիտեմ՝ քանի բառի սահմաններում, քանի հղումների պայմաններում պետք է Ռեֆերատ ղեկավարեմ: Չկան ծրագրային չափանիշները: Մենք որոշել ենք ամբիոնում համագործակցություն անենք տարբեր առարկաների հետ: Բնականաբար Ձեր դասավանդած առարկան Ձերն է, բայց կա նաև Պոլիֆոնիայի հետ համագործակցություն ևս եմ առաջարկել եմ, երբ երրորդ կուրսում կա ֆուգա թեման, այն քննարկվի նաև տեսության ամբիոնի դասարանում: Այսինքն, բացի կոմպոզիցիայի բուն նյութից քննարկվի նաև ուսանողի աշխատանքը ուրիշ ոճերում:

ՄԱՀԱԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ – մինչև առաջարկելը մենք պետք է համագործակցենք, հստակ, համակարգված աշխատենք ծրագրերի վրա, ինչպես արել է Երաժշտության

պատմության ամբիոնը: Այսպիսի ծրագրերը համատեղ նախապես քննարկված լինեն, որպեսզի մենք հասկանանք առաջարկների սահմանները, չլինեն կրկնություններ:

ԱՎԱՆԵՍՈՎ ԱՐԹՈՒՐ – Ճիշտն ասած մտավախություն չունեմ, որ կոմպոզիցիան դառնա կրկնվող առարկա:

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ /գիտական գծով պրոռեկտոր/– մի դիտարկում, օրինակ՝ առաջին կուրսի երկրորդ կիսամյակում Դուք պահանջում եք, որ ուսանողը ներկայացնի սոնատ, վարիացիա, ռոնդո կամ պասակալիա: Նրանք երաժշտական ձևերն անցնում են երրորդ կուրսում: Եթե առաջին կուրսի կոմպոզիտորն արդեն սոնատ է գրում, հետո ի՞նչ է անելու և ի՞նչ գիտելիքով է այդ սոնատը գրելու:

ԱՎԱՆԵՍՈՎ ԱՐԹՈՒՐ – Սոնատի պահանջը միշտ ունեցել ենք:

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ – Չի կարող այդպես լինել, երբ նրանք գալիս են երրորդ կուրս և չեն կարողանում գրել պարզ երկմաս ձև:

ԱՎԱՆԵՍՈՎ ԱՐԹՈՒՐ – Մենք դնում ենք հետևյալ պահանջը. Կոմպոզիցիայի դասախոսը կարող է սովորեցնել որևէ մեկ ձև:

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ – Բայց սոնատային ձևն ամենաբարդն է, ինչպե՞ս կարող է առաջին կուրսում սոնատ գրի:

ՆԱՎՈՅԱՆ ՄՇԵՐ – Ես կիսում եմ այս կարծիքը և, ելնելով տարբեր ամբիոնների հետ համագործակցելու Ձեր թեզից, առաջարկում եմ դասական ձևերը, ոճերը դասավանդել՝ համակցելով Երաժշտության պատմության, Երաժշտության տեսության համընթաց առարկաների կուրսին, այսինքն՝ դրանց զուգահեռ:

Երկրորդ՝ առաջարկում եմ հեռանկարի մեջ աշխատենք կատարողների, կոմպոզիտորների համար Երրորդ կրթական Բարձրագույն մակարդակի վրա, նույնիսկ դիսերտացիոն թեզի տեսքով: Այն դեպքում, երբ Եվրոպան այսօր գիտի Երաժշտագիտական դիսերտացիոն թեզի և կոմպոզիտորական դիսերտացիոն թեզի միջև սկզբունքային տարբերությունները: Ռեֆերատը պետք է լինի դրա նախափուլը՝ իր համապատասխան չափորոշիչներով և առանձնահատկություններով, որ տարբերվի երաժշտագիտականից:

ԱՎԱՆԵՍՈՎ ԱՐԹՈՒՐ – Նպատակը հենց դա է, որ Մագիստրատուրայի աշխատանքը լինի ինքնավերլուծական: Ծրագրում կցված է Գրավոր վերլուծական աշխատանքի օրինակ:

ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ ԱԼԻՆԱ – Ուզում եմ հիշեցնել, որ ցանկացած ծրագիր պետք է հաշվի առնի թույլ և ավելի առաջավոր կարողություններով ուսանողին: Քննական հանձնաժողովը հաշվի է առնում ծրագրի բարդության աստիճանը: Ուսանողին չենք

կարող սահմանափակել, թե դու չես աճել, առաջին կուրսում սոնատ մի գրի: Եթե կարող է և լավն է գրում, ինչու՞ չէ:

ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐԶԱՍ – շարունակեմ Ալինա Աշոտովնայի խոսքը, այո, դա ցանկալին է: Պետք չէ գնալ պարտադրանքի ճանապարհով: Հակառակ դեպքում Կոմիտասն իր անունը կրող կոնսերվատորիան այսօր չէր կարող սովորել:

ՇԱԳՈՅԱՆ ԳՈՀԱՐ /ԵՊԿ Հրատարակչության դեկավար/- տեխնիկական մի առաջարկ եմ ուզում անել, կարծում եմ, որ ցանկացած ամբիոնի ծրագիր դեկավարն է կազմում, քննարկվում է ամբիոնի ներսում, իսկ այստեղ ներկայացվեն միայն գրախոսությունները, Գիտխորհուրդը լինի միայն հաստատողի դերում:

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱԸ – խոսքը ամբիոնից դուրս քննարկման մասին է և շատ տեղեր կան, որ համաձայնեցված չեն այլ ամբիոնների հետ:

ՄԵՀՐԱԲՅԱՆ ՇՈՒՇԱՆ – այդ դեպքերում տալիս ենք երկու շաբաթ ժամանակ:

ՆԱՎՈՅԱՆ ՄՇԵՐ – այս պահին կարող ենք հավանություն տալ, որովհետև իսկապես լարված աշխատանք է արվել: Համաձայն եմ, որ Ստեղծագործական ամբիոնը պետք է ազատություն ստանա, բայց մենք ունենք այնպիսի ազատություն, երբ ավարտական քննության ժամանակ տարրական գիտելիքի պահանջ էինք ներկայացնում և շատ դասախոսներ վիրավորվում էին, թե ինչպես կարելի է ձևի գիտելիք պահանջել ուսանողից՝ նա հանճար է և պետք է «20» ստանա: Լավ է, որ դրվում են այս չափանիշները, սկզբունքը ճիշտ է որդեգրված: Կարող ենք վերադարձնել ամբիոն, մեր հիմնական հավանությունը ստանալով, լրացնել առաջարկները:

ՄՏԵՓԱՆՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ /Երաժշտության տեսության ամբիոնի վարիչի պաշտոնակատար/ – Առաջարկ՝ որպեսզի մեր քննարկումն ավելի արդյունավետ լինի, եթե հնարավոր է, նախապես ուղարկեք ծրագրերը, որ կոնկրետ խոսենք:

Որոշեցին՝

Ստեղծագործական ամբիոնի Դասընթացի ծրագիրը վերադարձնել ամբիոն, առաջարկները լրացնելուց հետո երկու շաբաթ անց ստանալ Գիտական Խորհրդի հիմնական հավանությունը:

4. Ջեկուցում ԵՊԿ-ի հավատարմագրման գործընթացի մասին

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՆԱԲԻՆԵ - «Որակի ներքին ապահովման բաժնի» վարիչ

Առարկայական ծրագրերի հաստատման հաջորդ էտապը պետք է լինի մասնագիտական Կրթական ծրագրեր կազմելը:

Հիմա գտնվում ենք հավատարմագրման շատ կարևոր փուլում: Գործընթացը մի պահ դադարեցրել էինք, բայց այս տարի (ինչպես նախապես ասել էինք) Ինստիտուցիոնալ հավատարմագրման մեջ շեշտադրելու ենք կրթական ծրագրերի վրա: Դիմում եմ ամբիոնների վարիչներին, որ հավատարմագրման ընթացքում անընդհատ գալու են փաստաթղթեր, որոնք պետք է լրացնել, տրամադրել տվյալներ: Մենք շատ սեղմ ժամկետներ ունենք և խնդրում ենք իրականացնել առաջադրված վերջնաժամկետի մեջ:

ԳԵՂԱՄՅԱՆ ԳԱՅԱՆԵ - /մեներգեցողության ամբիոնի վարիչի պաշտոնակատար / - Ձեր ներկայացված փաստաթղթերում հարցեր կան, որոնք կապված են Կադրերի բաժնի, Ուսումնական մասի հետ: Մի՞ թե չկան դրանով զբաղվող մարդիկ, որ դա պետք է ամբիոնի ղեկավարն անի: Անգամ ասիստենտն էլ չի հասցնում: Ինչպես օրինակ՝ վարձավճարների ժամկետի հարցը, որը դրված է մինչև մարտի 15-ը: Չվճարելու դեպքում մենք ժամերը հանում ենք, վերաբաշխում ենք: Երբ երկու օր հետո վերականգնվում է ուսանողը, դասախոսը տեղում բողոքում է՝ ինչու է պակաս ստացել աշխատավարձը: Նորից տալիս ենք հրաման, որպեսզի շտկվի: Այս ամենն ահռելի գործ է: Մոռանում եք, որ կատարողներ ենք և մեր ուսանողների կատարողական արվեստով զբաղվելու անելիքը թողած, զբաղված ենք թղթաբանությամբ: Խնդրում եմ, եթե ինչ-որ հարցեր կարող են անել, իրականացնեն Ուսումնական մասի աշխատակիցները կամ համապատասխան այլ բաժինը: Վերաբերվեք այնպես, որ ամբիոնների վարիչները կարողանան զբաղվել իրենց գործով: Ամեն օր ուսանողների անձնական խնդիրների հետ կապված ինչքան հարցեր ենք մենք լուծում: Չի կարելի մնացած հարցերն էլ դնել ամբիոնների վարիչների վրա:

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ - Ձեզ հասկանում եմ, բայց կան անելիքներ, որոնք վերաբերում են ամբիոնների ղեկավարներին: Յուրաքանչյուր բաժնին ներկայացվում է կոնկրետ ուղղված հարցաշարը, որոնք ահռելի ծավալի են: Դրանք առանձին-առանձին հավաքվում են, որ կարողանան վերլուծվել:

ԱՎԱՆԵՍՈՎ ԱՐԹՈՒՐ - Վերջին ստացած թղթում մենք պետք է նշեինք մեր դասախոսական կազմի որակավորումները: Դա Կադրերի բաժնի ինֆորմացիա է: Սա գործառույթի հարցն է. ես պետք է Կադրերին դիմեմ, թող միանգամից նրան տան: Ինչու՞ զնամ Կադրերի բաժին:

ԳԵՂԱՄՅԱՆ ԳԱՅԱՆԵ - Ստաժին վերաբերող հարցը - աշխատակիցը եղել է ասիստենտ, հետո դարել է դասախոս, հետո՝ դոցենտ և այլն: Դե արի ու հասկացի, թե որ ստաժն է ամբիոնի ղեկավարը հաշվելու: Մարդ կա, որ դոցենտ է ի պաշտոնե, բայց դրա կոչումը չունի (ԲՈԿ-ով հաստատված չի) և հակառակը՝ չես իմանում, թե այս կոչումը գրես, թե՛ ոչ, որովհետև բողոքում են, թե դոցենտ են, ինչու չի գրվում:

Դառնում է պատմություն: Միթե կարող է դա լուծի ամբիոնի վարիչը: Մենք չենք կարողանում զբաղվել մեր ուղիղ գործառույթով՝ կրթելով, դասավանդելով:

ՆԱՎՈՅԱՆ ՄՇԵՐ – լիովին արդարացված է ամբիոնների ղեկավարների բարձրացրած հարցը, որովհետև կա սկզբունքորեն սահմանված գործառույթներ. Ամբիոնի վարիչները ղեկավարում են գիտամանկավարժական վերահսկողության տեսանկյունից: Մնացածը՝ ադմինիստրատիվ, վարչական և այլ ծառայությունները համապատասխան բաժիններն են կատարում:

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ – մեզ մոտ կան պայմաններ, համաձայն որոնց այսպիսի տվյալները պետք է ստանան ամբիոնի վարիչներից:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՈՆԱ – Ես հասկանում եմ վրդովմունքը, որովհետև իսկապես ծանր շրջան է. մեծ են փոփոխությունները, անընդհատ կարգավիճակներ, անվանումներ են փոխվում, տվյալներ են պարտադրում, որովհետև հավատարմագրումը 4 տարի մեկ է արվել: 4 տարի չարված աշխատանքը անում ենք շաբաթների, ամիսների ընթացքում: Այդ պատճառով նման վիճակ է: Մենք դրանում մեղավոր չենք. 4 տարի առարկայական ծրագրեր, ուսումնական պլաններ պետք է արված լինեին քայլ առ քայլ, ոչ թե այս ձևով՝ գերծանրաբեռնված աշխատանքային ռեժիմով Ուսումնական պրոռեկտորը զբաղված է չափորոշիչների ձևակերպմամբ: Այս աշխատանքը պետք է արվեր տարիների ընթացքում, հավատարմագրման 4 տարին լրացել է, ինչու պետք է բացենք ու տեսնենք ժամկետնանց ծրագիր է ներկայացված: Ծրագիրը թարմացված չի, աշխատանքը պետք է հետևողական արվեր, հիմա նոր-նոր վերափոխումներ ենք անում: Ծրագրերի ինչ-ինչ մասնագիտական դրույթներ այլ առարկաների հետ համաձայնեցված չեն (ինչպես՝ Ստեղծագործական ամբիոնի ներկայացրած ծրագրի դեպքում), անգամ Ուսանողները դեռևս նոյեմբեր ամսին կայացած առաջին հանդիպման ընթացքում դրանից էին բողոքում, որ ինչու մենք երրորդ կուրսում անցնում ենք Ձևի վերլուծություն, իսկ առաջին տարում պետք է Ռեֆերատ գրենք: Սրանք նոր հարցեր չեն, որոնք աշխատում ենք կարգավորել: Դրա համար ծանր է: Հիմա ես լուծումը հետևյալում եմ տեսնում, որ Կադրերի բաժնում ունենք բազմաթիվ ադմինիստրատիվ աշխատակիցներ, ովքեր նույնքան մինչև ուշ պետք է բարի լինեն, աշխատեն այնպես, ինչպես աշխատում են մի քանի օղակներ. ինչպես ամբիոնի վարիչները, պրոռեկտորները, իսկապես օրնիբուն աշխատում են: Իրար վրա զցելով չենք կարող իրականացնել: Եթե ասում ենք մի բան պետք է ներայացնել, մեզ պատասխանում են՝ որ ասում ենք ու չեն բերում: Միբելի ամբիոնի վարիչներ, դուք միայն ստեղծագործական աշխատանքով չպետք է զբաղվեք: Եթե ամբիոնի վարիչ եք, դա արդեն փոքր, բայց ադմինիստրատիվ պաշտոն է: Դուք պետք է պատրաստ լինեք. համակարգման հարցեր կան և դա զուտ ստեղծագործական դիրք չի: Այդտեղ կան միջանկյալ գործառույթներ. Կան ամբիոնի վարիչներ, ովքեր ներկայացնում են ձեռագիր, կցկտուր գրված բաներ, իսկ դա նրան առաջարկվել է անել ամիսներ առաջ:

Հետո, երբ խոսում ենք այլ դիրքերից, նրանք ասում են, թե աշխատում են: Այդպես մենք չենք կարող աշխատել: Մինչև քանիսը Արամ Հովհաննիսյանը նստի, որ շտկի ու ներառի այդ տեղեկությունները, հաշվի ՄՈԳ-ը, կրեդիտները: Արդյոք մեկ մարդ պետք է անի, սա էլ ձև չի, չէ՞: Ես տեսնում եմ համակարգման, ճիշտ բաշխման, հազար ու մի հարցեր կան, որ այսօր արվում են, որովհետև սեպտեմբերից պետք է սկսեն սովորել նորացված, ավելի թեթև, քիչ ծանրաբեռնված, բայց բովանդակային առումով ավելի հագեցված, խորը ծրագրերով: Այսինքն սա մտահոգություն է և այս փուլում աշխատանքը շատ է: Մի քիչ դիմացկուն ու հանդուրժող եղեք, որ այս լարումն անցնի, գնա: Առաջիկա տարիներին ավելի հանդարտ կլինի թղթաբանական հարցը:

ԳԵՂԱՄՅԱՆ ԳԱՅԱՆԵ – Մենք սիրով հաշվում ենք կրեդիտները...

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ – Եթե հարցը կրեդիտներինն է՝ ոչ թե ամբիոնների վարիչների, այլ իմ հոգու հանգստության խնդիրն է, ավելի լավ է հիմա մի քանի շաբաթ լարված աշխատել, բայց հետո վերջնական ճշգրտված արդյունքներ ունենանք: Հատկապես, եթե ունենք այդ բոլորի համապատասխանեցումը: Գայանե Պարույրովնայի բարձրացրած խնդիրը հավելյալ գործառույթի մասին է:

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ – Կադրերի բաժինը գերծանրաբեռնված է, գիտեք, որ մի քանի ստուգումներ են իրականացվում և բոլորն այնտեղ են գնում: Բայց մենք էլ ժամկետներ ունենք:

ԳԵՂԱՄՅԱՆ ԳԱՅԱՆԵ – բայց ինչու՞ մեր հաշվին: Դուք գնացեք, նստեք Կադրերի բաժին և վերցրեք հետաքրքրող տեղեկությունը:

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ – Մենք ձեր ներկայացրած տվյալները նորից ստուգում ենք այնտեղ: Սա միակ բանն էր, որ վերաբերում էր ամբիոնների վարիչներին: Մնացածը այլ հարցեր են:

Գնահատման փոփոխված համակարգը, որը Ուսումնական գծով պրոռեկտորը ներկայացրել էր դեկանատներին: Խնդրում եմ ամբիոնների վարիչներին ամբիոնի նիստերում քննարկելուց հետո, մինչև ապրիլի վերջ ներկայացնել գնահատման իրենց ներկայացված համակարգը: Բոլոր դասախոսները պետք է տեղյակ լինեն, ինչի մասին է խոսքը, որ վերջնական քննության օրն արդեն կիրառեն:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ – Խոսվեց գնահատման համակարգի մասին և որպես ռեպլիկ ասեմ, որ սխեման պատրաստ է, բայց մենք ունենք մի հավելում՝ կապված վոկալ ամբիոնի հետ: Մոտ օրերս կներկայացվեն դեկանատներ, քննարկումը կարող է տեղի ունենալ առաջիկա ամսվա ընթացքում և հաջորդ Գիտ.Խորհրդի նիստում կարող ենք ներկայացնել: Առաջարկվելու է գնահատման չափանիշների երկու տարբերակ՝ ընդհանուր տեքստերով և բաց-ազատ: Այսինքն ցանկացած մասնագիտության մասնագիտացում հնարավորություն կունենա այդտեղ դնել չափորոշիչների իր ձևակերպումը, այսինքն՝ նույնպես տրվելու է ազատություն,

որպեսզի մենք չընկնենք ընդհանուր չափանիշները ձևափոխելու, առաձին տերմինների հետևից չընկնելու համար: Հնարավորություն է լինելու սխեմայի դատարկ տեղերում սահմանել սեփական պահանջները:

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ – Հիմա անդրադառնամ այն փաստաթղթերին, որոնք կապված են հավատարմագրման հետ: Մենք պետք է բոլորս այդ բազան հավաքենք: Այս անգամ շատ ավելի մանրամասն է պահանջվելու: Մեր բաժնի 3 աշխատակիցը չի կարող 800 հոգու փոխարեն աշխատել: Մենք ձեզ հետո ֆոկուս-խմբեր պետք է կազմենք, անընդհատ հանդիպենք, այդ պրոցեսի մեջ պետք է լինենք: Ստուգողները գալու են ոչ միայն փաստաթղթերը ստուգեն, այլ գալու են անձամբ ձեզ հետ հանդիպման: Եվ բոլոր հարցերին, որոնք ներկայացված են, պետք է պատրաստ լինեք պատասխանելու:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ – մի լրացում այն մասին, թե ինչու է ուշանում գնահատման համակարգի ներկայացումը: Կարևոր դրույթներից մեկը լինելու է քննության օրը բացակաների նշելը գնահատման համակարգի մեջ: Այսինքն, ինչպես գիտեք, մենք հիմա առաջարկել ենք գնահատականի իջեցում - որոշակի անհարգելի բացակաների ընթացքում. 3 բացակայի դեպքում՝ 1 բալ ավտոմատ իջեցում է, 5-ի դեպքում՝ 2, իսկ 7-ի դեպքում՝ ուղարկում եք Ուսումնական գծով պրոռեկտորի մոտ, որովհետև դրվում է հեռացման հարցը: Ուսանողները գիտեն: Մենք ունենք միջազգային մրցույթների մեկնող ուսանողներ, այդ դեպքում Ուսումնական գծով պրոռեկտորին ներկայացվում է կոնկրետ ժամկետով դիմում՝ դասերից իրենց ազատելու մասին: Նույնը վերաբերում է առողջական խնդիրների և այլ դժբախտ դեպքերին, որոնք առնչվում են հարգելի բացականերին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՈՆԱ – Խնդրում եմ ամբիոնի վարիչներին, որպեսզի մեկ անգամ ևս տեղեկացնեն բոլորին, որ սա օրենք է և հարկավոր է հետևել: Այդպիսի արտոնություններ, ինչպես օրինակ՝ հաճախել միայն մասնագիտության դասին, կամ ազատվել ինչ-ինչ առարկաներից, չհաճախել նվազախմբի պարապմունքներին, սա անհունդրժեղի եմ համարում: Կարծում եմ, եթե կոնսերվատորիան ընդունվել են, ուրեմն պետք է ունենան կոնսերվատորիական ամբողջական կրթություն: Բոլոր ուսանողներն էլ ամբողջ աշխարհում աշխատում են, այնպես պետք է դասավորել, որպեսզի ուսման հաշվին չլինի: Այլ կերպ մեր մասնագիտությունը դնում ենք շատ անարժանապատիվ վիճակի մեջ և կոնսերվատորիան դնում ենք լուրջ հարվածի տակ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ – Աշխատող ուսանողները ուսումնառությունը վերջացնելուց հետո կարող են հավելյալ տարում հանձնեն քննությունը՝ հենց սկզբից սահմանելով, որ կոնկրետ դասաժամերին կոնկրետ տարի չեն կարող մասնակցել, կամ կարող են հենց սկզբում խումբը փոխեն:

ԽԱՉԱՏՏՅԱՆ ՉԲԻՉՈՐ –/ ուսանող/ – Համատեղ ժողովի ժամանակ մեզ տեղեկացրել են, քննարկել ենք: Պարզապես բացականների հետ կապված խնդիր կա, որ դասախոսական կազմում ոչ բոլորն են տեղյակ, օրինակ մեր 4 կուրսի 4 առարկաների դասախոսները տեղյակ չեն դրա մասին՝ պատճառաբանելով, որ երբեք էլ մեր բացականների վրա ուշադրություն չի դարձվել: Կիսնդրեմ, որ ամբիոնների վարիչները դասախոսներին դրա մասին ևս տեղյակ պահեն, որ բացականներին ավելի լուրջ վերաբերվեն:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ – դրա հետ կապված կա կոնկրետ դեպք, երբ ուսանողների հետ հանդիպում տեղի ունեցավ և բարձրաձայնեցինք, որ 7 անհարգելի բացականների դեպքում դրվում է հեռացման հարցը, մյուս օրը Արթուր Աքշեյանի դասին երեք խմբից 45 հոգով եկան 25 հոգանոց լսարան (նախորդ դասին եկել էր 1 ուսանող): Պետք է այդ խմբերի ուսանողներին բալանսավորել: Կառաջարկեմ այդ ցուցակները կազմել նախապես, որ ուսանողը ունենա իր գալու հստակ օրը:

ՀԱԿՈԲՅԱՆ ԷԴԻՏԱ – Ամբիոնի վարիչներին հանձնարարեցին ներկայացնել կոչումները: Ճիշտը նա է, որ հաստատուն տեղեկություններ տիրապետող Կադրերի բաժինը ներկայացնի:

ԶՈՒՐԱԲՅԱՆ ԺԱՆՆԱ – Կադրերի բաժնում անմիջապես գրանցվում է ԲՈԿ-ով ստացած կոչումը:

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՆԱԲԻԼԵ – Առաջին անգամ 3 տարով մտել ենք ERASMUS BOOST ծրագիր, որն ավարտվելու է երեք ամսից: Արդյունքում մենք պետք է ունենանք Վերակառուցված միջազգային բաժին, ունենք փայլուն սարքավորումներ, որոնք արդեն կոնսերվատորիայում են և մենք պետք է փոխենք մեր միջազգայնացման գաղափարի ոճը, որովհետև տարբեր կազմերով ամեն անգամ համապատասխան թեմայի շուրջ ներակայացել են մեր գործընկերները: Կարծում եմ ծրագրի ավարտի կունենանք անհրաժեշտ պահանջները, քանի որ հսկող մարմինը լինելու է Եվրոպան: Մի անգամ նրանք եկել են, մոնիթորինգ են արել և թիվ մեկ խնդիրը, իմանալով, որ դե-յուրե մենք ունենք Միջազգային բաժինը, ուզում են մեզ ավելի լավ շարքերում տեսնել: Մենք կարողանում ենք Կոնսերվատորիան պատշաճ մակարդակի ներայացնել՝ մեր նվաճումները, հաղթանակները և այլն:

Ինչ վերաբերում է համաշխարհային հաջողություններին ուզում եմ հաստուկ շնորհակալություն հայտնել Արգաս Ոսկանյանին, որովհետև 10 ամիս առաջ, 2018-ի մայիսին, մենք հյուրընկալել էինք Լոս Անջելեսի USC (Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի)–ի Music of School-ի Միջազգային բաժնի վարչության ղեկավարին, կնքել էինք Հուշագիր և կարծում էինք՝ ինչպես միշտ դրանով կավարտվի, բայց ունեցանք մեծ հաջողություն: Այստեղ իրականացվեց վարպետության դաս և հաջորդ քայլով խնդրեցին, որ մեր ուսանողները (ազգային գործիքներ կատարող) այնտեղ լինեն: Արգաս Ոսկանյանը, որպես Ժողովրդական նվագարանների և ժողովրդական

երգեցողության ամբիոնի ղեկավար, առաջարկել էր դուդուկահար Դավիթ Սահակյանին և քանոնահար Էթերի Հովհաննիսյանին: Վերջերս ստացել էին տեղեկություն-լուսանկարներ. նրանք մեկ շաբաթ միջազգային ուսանողների մեծ խմբի հետ հաճախում են դասընթացների, ունենում են վարպետության դասեր և գտնվում են շատ հետաքրքիր ստեղծագործական մթնոլորտում: Մարտի 1-ին տեղի ունենալու մեկ ժամանոց համերգ, որից 20 րոպե տրամադրվելու է մեր ուսանողներին, որովհետև շատ գոհ են մնացել նրանցից:

ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ ԱԼԻՆԱ – / Գնահատման համակարգի չափորոշիչների հարցով/ Երկու խոսք եմ ուզում ասել. Մեր գնահատման համակարգը 20 միավորից է բաղկացած, որից ամեն նիշ ունի երեք թիվ. որ 20-ը՝ 5+, 19-ը՝ 5, 18-ը՝ 5-: Արդյո՞ք մենք այդ ու ձախ 20-եր բաժանելով չենք արժեզրկում 20 նիշի արժեքը: Չէ՞ որ դա բացառիկ գնահատական է, ինչքան պետք է ուսանողը բարձր որակ ունենա՝ իր վարքով, առաջադիմությամբ, որ մենք նրան գնահատենք 20: Եկեք մտածենք այս ուղղությամբ, որպեսզի մեր գնահատականները ճիշտ լինեն: Բայց դա նաև չափորոշիչներ մշակելու աշխատանք է պահանջում և հասկանանք, թե որ դեպքում, ինչ ենք դնում, ինչպես միջազգային մրցույթների ժամանակ բալեր հաշվելիս, մարդիկ ստույգ գիտեն՝ որ դեպքում ինչքան միավոր է դրվում և վերջում ինչ ենք ստանում: Խնդրում եմ, որ դասախոսները մտածեն դրա մասին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ – երբ ես սովորում էի Շվեյցարիայի կոնսերվատորիայում, չեմ հիշում, որևէ ուսանողի, ով մասնագիտությունից ստանա 20 միավոր: Ինձ հետ սովորել են այսօրվա փայլուն կատարող երաժիշտները, նրանցից ոչ ոք չի ստացել 20:

Որոշեցին

- Ամբիոններում քննարկել և մինչև ապրիլի վերջ ներկայացնել Գնահատման համակարգի իրենց տարբերակները:
- Որակի Ապահովման բաժնից ներկայացված փաստաթղթերին պատասխանել նշված վերջնաժամկետներում:
- Ամբիոնների վարիչներին ևս մեկ անգամ հիշեցնել, որ տեղակացնեն, որ գործում է ուսանողների հաճախումները մատյաններում պարտադիր գրանցելու նոր կարգը: Համաձայն որի 3 ԱՆՀԱԲԳԵԼԻ բացակայի դեպքում՝ քննությանը 1 բալ ավտոմատ իջեցվում է, 5-ի դեպքում՝ 2, իսկ 7-ի դեպքում՝ Ուսումնական գծով պրոռեկտորին տեղյակ պահելուց հետո դրվում է հեռացման հարցը:

5. ԵՊԿ Կոնցերտմայստերական պատրաստման ամբիոնի դոցենտ Սահենիկ Մադաթյանի «Հայաստանի կոնցերտմայստերները» գրքին վերաբերող ամբիոնի Որոշումը, համաձայն որի գիրքը երաշխավորվում է որպես պատմագիտական փաստացի տվյալներ

**ու կենսագրական հիմնավոր աղբյուր պարունակող
ուսումնասիրման ձեռնարկ:**

Հարցը դրված է Գիտխորհրդի հաստատմանը:

ՆԱՎՈՅԱՆ ՄՀԵՐ – Ձևակերպումը պետք է ճշգրտել. դա «պատմագիտական» չի, այլ «երաժշտության կատարողական արվեստի պատմություն» է:

ԳՅՈՒԼԲՈՒԴԱՂՅԱՆ ՍԻՆՈՐԱ - /Կոնցերտամասերական ամբիոնի վարիչ/ - Ես չգիտեմ՝ ինչի համար է արվում, որովհետև մեզ ներկայացվել էր այսպես, որ այդ ձեռնարկը պետք է գնա որպես գիտամեթոդական աշխատանք, որպեսզի ներկայացվի պրոֆեսուրայի: Ամբիոնն այդ հարցը լսել է և գտավ, որ այն բոլորովին գիտամեթոդական աշխատանք չի:

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ – Կոնցերտամասերական ամբիոնին խնդրել էինք ներկայացնել այս գրքի բնութագիրը: Եթե չկա մեթոդական բաղադրիչ, ուրեմն պետք չի գրել, որ այն գիտամեթոդական է:

Որոշեցին

Սահենիկ Մաղաքյանի «Հայաստանի կոնցերտամասերները» գիրքը հաստատել որպես «Երաժշտության կատարողական արվեստի պատմությանն առնչվող փաստացի տվյալներով ու կենսագրական հիմնավոր աղբյուր պարունակող ուսումնական ձեռնարկ»: Որպես լրացուցիչ գրականություն, կարող է կիրառվել դաշնամուրային կատարողական արվեստի պատմության և հայ երաժշտության պատմության դասընթացներում:

6. ԲՈԿ-ով կոչում ստացած ԵՊԿ 10 դասախոսներին համապատասխան պաշտոնին տեղափոխելու մասին ռեկտորի պաշտոնակատար՝ պրոֆ. Սոնա Հովհաննիսյանի առաջարկը:

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ – Վերջին երկու տարում ԲՈԿ-ով դոցենտի ու պրոֆեսորի կոչում ստացած ԵՊԿ-ի պրոֆեսորադասախոսական կազմի թվով 10 աշխատակից ունենք:

Դոցենտի կոչում են ստացել

- Դասախոսներ՝

1. Աթանասյան Նունեն Ռոմեոյի (Հայ երաժշտական Ֆուլկլորագիտության ամբիոն)
2. Սահակյան Քրիստինե Ռազմիկի (Մեներգեղության ամբիոն)
3. Պողոսյան Աննա Աշոտի (Մեներգեղության ամբիոն)
4. Սիմոնյան Բելլա Արկադիի (Կոնցերտամասերական ամբիոն)

5. Մուրադյան Նունե Աշոտի (Մեներգեցության ամբիոն)
6. Հարությունյան Մուշեղ Զաքարի (Ժող. Նվագարանների ամբիոն)
7. Մեղրակյան Մարգար Մեղրակի (Դաշնամուրային ամբիոն)
8. Բակունց Աննա Ակսելի (Դաշնամուրային ամբիոն)

Պրոֆեսորի կոչում են ստացել

- Դոցենտներ
 1. Պողոսյան Նունե Էդիկի (Կատարողական արվ. պատմության և տեսության ամբիոն)
 2. Բաբայան Վահրամ Օհանի (Ստեղծագործական ամբիոն)

Մյուս բոլոր պայմաններին համապատասխանելու դեպքում նրանց տեղափոխել համապատասխան պաշտոնների ժամկետային պայմանագրով:

ՂԱԶԱՐՅԱՆ ԴԱՎԻԹ – Այդ գործը որպես Գիտական քարտուղար ժառանգել էմ ժաննա Զուրաբյանից և այն տարիներին մենք անհանգստություն ունեինք, ինչու առանձին կոչում ունեցող դասախոսներ չեն ստանում նոր տարակարգ: Արդյո՞ք այդքանն է ցանկը, որովհետև այս գործընթացը լինում է մրցույթով:

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ – Կադրերի բաժնում ասել են, որ ԲՈԿ-ով հաստատված և ԵՊԿ-ում պաշտոն չստացածներն այսքանն են: Մա լինելու է ժամկետային պայմանագիր:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՈՆԱ – 5-ամյա պաշտոնների ընտրության մրցութային եղանակն առջևում է:

Քվեարկություն՝

Կողմ՝ 36

Դեմ՝ 0

Ձեռնպահ՝ 9

Որոշեցին

Հիմք ընդունելով իրավունք վերապահող Բարձրագույն Որակավորման Կոմիտեի դիպլոմները մյուս բոլոր պայմաններին համապատասխանելու դեպքում ԵՊԿ դասախոսներին՝

1. **Աբրահամյան Նունեն Ռումեոյի** (Հայ երաժշտական Ֆոլկլորագիտության ամբիոն)
2. **Սահակյան Քրիստինե Ռազմիկի** (Մեներգեցողության ամբիոն)
3. **Պողոսյան Աննա Աշոտի** (Մեներգեցողության ամբիոն)
4. **Միսոնյան Բելլա Արկադիի** (Կոնցերտամյասերական ամբիոն)
5. **Մուրադյան Նունե Աշոտի** (Մեներգեցողության ամբիոն)
6. **Հարությունյան Մուշեղ Զաքարի** (Ժող. Նվագարանների ամբիոն)
7. **Սեդրակյան Մարգար Սեդրակի** (Դաշնամուրային ամբիոն)
8. **Բակունց Աննա Ակսելի** (Դաշնամուրային ամբիոն)

Դոցենտներին՝

9. **Պողոսյան Նունե Էդիկի** (Կատարողական արվ. պատմության և տեսության ամբիոն)
10. **Բաբայան Վահրամ Օհանի** (Ստեղծագործական ամբիոն)

տեղափոխել համապատասխան պաշտոնների ժամկետային պայմանագրով մինչև 31.08.2019թ: Միաժամանակ այդ պաշտոններում մինչև հինգ տարի ժամկետով համալրումը պետք է կատարվի բաց մրցութային ընտրության եղանակով:

Որոշեցին հանձնարարել Կադրերի բաժնին կատարել սույնից բխող ձևակերպումներ:

Այլ հարց՝

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ/ԵՊԿ-ի Գյումրու մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար/ - Ցանկանում էի Գիտական Խորհրդին ներկայացնել և համաձայնություն ստանալ Կառուցվածքային հետևյալ հարցով: Մեզ մոտ գործում է Խորհուրդ (ԲՈՒՀ-ի հետ կապված որոշումներ կայացնող), որի 15 անդամները ձևակերպված են որպես ամբիոնների վարիչների պատասխանատուներ: Մեզ միշտ ասել են, որ մենք ամբիոններ չունենք, քանի որ ըստ կանոնադրության ամբիոն կոչվելու համար պետք է լինեն 5 դասախոս: Ելնելով ստեղծված իրավիճակից, ճիշտ աշխատանք կազմակերպելու համար, ուզում էին Ձեր համաձայնությունը ստանալ՝ ստեղծել երկու համարուհական ամբիոն, այսինքն մեկը կոչվեր Կատարողական (որտեղ մտնում են բոլոր կատարողները), մյուսները՝ Հումանիտար, Հեռակա՝ ենթարկվելով ԲՈՒՀ- կանոնակարգին:

ՂԱԶԱՐՅԱՆ ԴԱՎԻԹ - Կարծում եմ պետք է ընդառաջել Գյումրիին:

ՆԱՎՈՅԱՆ ՄՀԵՐ – Որքան հիշում եմ կա ցենզ՝ Ամբիոն ունենալու համար, բացի 5 դասախոս ունենալու համար, պետք է գիտական կոչումով 3 պրոֆեսոր ունենալ: Այսինքն կարող են ոչ թե ամբիոն, այլ՝ բաժին կոչվել: Ես ոչ թե դեմ եմ կամ՝ կողմ, այլ ասում եմ, որ այսպիսի կանոնադրական նորմ կա: Ճշտեք, նոր այդպիսի առաջարկ

արեք, որովհետև մինչև 3 պրոֆեսոր ունենալու դեպքում այդպիսի բան չենք կարող անել: Կարող եք ձևակերպել որպես «Բաժին»:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ – Մեզ մոտ Կատարողական բլոկում կա 3 դոցենտ, 1 պրոֆեսոր: Կճշտենք կանոնակարգը:

Երկրորդ հարցը՝ մենք իրավունք ունենք ունենալ Մանդատային հանձնաժողով՝ զեղչեր կատարելու համար, մեզ մոտ, պարզվեց, կան Արձանագրություններ:

ՄԵՀՐԱԲՅԱՆ ՇՈՒՇԱՆ – Վերջին ստուգումները պարզեցին, որ ԲՈՒՀ-ը պետք է ունենա մեկ ընդհանուր Մանդատային հանձնաժողով, որը պատասխանատու է և Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի Գլխավոր մասնաճյուղի, և Գյումրիի մասնաճյուղի համար: Մինչ այսօր Գյումրիում զեղչերի, ռոտացիայի հարցերն այնտեղ կատարվել են և հույս ունեմ, որ այս կիսամյակից սկսած Գյումրու մասնաճյուղի թղթերը մեզ պետք է ուղարկեք, որպեսզի մենք կարողանանք աշխատել ընդհանրական ձևով:

ՂԱԶԱՐՅԱՆ ՂԱՎԻԹ – ...ընդգրկելով բաժանմունքի ներկայացուցչին:

Որոշեցին

ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի Բաժիններին ճշտել Ամբիոն ձևավորելու կանոնադրական նորմերը, ապա առաջարկել համարուհական ամբիոններ ստեղծելու հարցը:

ԵՊԿ-ի Գլխավոր և Գյումրու մասնաճյուղը պետք է ունենան Մանդատային մեկ հանձնաժողով, որտեղ նաև կընդգրկվի Գյումրու մասնաճյուղի ներկայացուցիչը: 2018-19 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակից սկսած Գյումրիի մասնաճյուղը պետք է ներկայացնի զեղչերի ու ռոտացիայի հարցերին վերաբերող փաստաթղթերը:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՈՆԱ – Հիշեցնեմ, որ բոլոր հայտարարությունները նախապես ձևակերպած տեքստի ձևով պետք է ներկայացնել Ումրոյան Սեգեյին կամ Մեհրաբյան Շուշանիկին, որպեսզի տեղեկությունը հասնի հասցեատերերին:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ  Մոնա Հովհաննիսյան

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝  Օլյա Եսիրջանյան

